

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆՍՏԱՇՐՋԱՆՆ ԱՄՆ-ՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 5—8-ը Նյու-Վինդսորի (ԱՄՆ, Մերիլենդ) Եղբայրության եկեղեցու կենտրոնում կայացավ Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի Աշխատանքային կոմիտեի նստաշրջանը՝ Արևելյան Եվրոպայի հետ հարաբերության ամերիկյան քրիստոնեական ընկերակցության հրավերով: Նստաշրջանի գլխավոր թեման էր՝ «Քրիստոնյաների բարոյական պարտավորությունները զինաթափման գործում»:

Նստաշրջանը բացվեց Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի նախագահ, Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ տ. Նիկոդիմ արքեպիսկոպոսի ներածական խոսքով: Ներկա էին տարբեր մայրցամաքների 18 երկրների՝ Սովետական Միության, Բուլղարիայի, Ռումինիայի, Չեխոսլովակիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Դեմոկրատական և Ֆեդերատիվ Գերմանիաների, Հոլանդիայի, Շվեյցարիայի, Ֆինլանդիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի, Չիլիի, Հնդկաստանի, Ծրի Լանկայի, Եթովպիայի, Սիեռա Լեոնեի եկեղեցիների 77 ներկայացուցիչներ, հյուրեր և լրագրողներ: Մայր Աթոռի կողմից նստաշրջանին մասնակցում էր Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Հովհ. Թոփուզյանը՝ որպես վերոհիշյալ կազմակերպության Միջազգային քարտուղարության անդամ:

Օրակարգը բաղկացած էր ավելի քան 120 հարցերից: Այդ հարցերի թվում էին Սովետական Միության, ԱՄՆ-ի և Հընդկաստանի պետական ներկայացուցիչների զեկուցումները՝ գլխավոր թեմայի շուրջ, ընդհանուր քարտուղարի տեղեկագիրը՝ Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի վեցամսյա գործունեության մասին, հանձնաժողովների, ենթահանձնաժողովների, շրջանային կոմիտեների հաշվետվությունները, Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի հետագա ձեռնարկումների ծրագիրը, բյուջեն և այլն:

Հարցերը քննարկվեցին հանգամանորեն ու ամենայն լրջությամբ և ընդունվեցին համապատասխան որոշումներ ու հանձնարարականներ: Վերջում միաձայնությամբ հավանություն տրվեց նստաշրջանի արդյունքներն ամփոփող գլխավոր փաստաթղթին՝ բանաձևին:

Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի ընդհանուր քարտուղար դոկտ. Կարոլի Տոթի տեղեկագրից պարզվեց, որ զգալի հաջողություններ են ձեռք բերվել եկեղեցիների գլխավորած խաղաղության

շարժման ծավալման գործում: Արդեն ստեղծվել է Ասիայի խաղաղության քրիստոնեական կոնֆերանս (ԱԽՔԿ), և ծրագրված է համանման կոնֆերանս ստեղծել նաև Աֆրիկայում: Բացի այդ, աշխատանքներ են կատարվել Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Անգլիայի տարբեր եկեղեցիներ ու կրոնական ընկերակցություններ Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի կազմում ներգրավելու ուղղությամբ:

Նստաշրջանում մեծ հետաքրքրություն առաջացրին գլխավոր թեմայի շուրջ կատարված զեկուցումները: Ամերիկայի Միացյալ Նահանգներում սովետական դեսպանատան առաջին քարտուղար Ալեքսանդր Կոկորևը հանգամանորեն շարադրեց սովետական կառավարության խաղաղասիրական քաղաքականությունը և այն դժվարությունները, որ ներկայումս խոչընդոտում են զինաթափման սովետա-ամերիկյան բանակցությունները: Զեկուցողը, փաստեր բերելով միջուկային զենքի նոր տեսակների անարկու հզորության մասին, եզրակացրեց, որ սպառազինությունների դեմ պայքարի ելքից է կախված համայն մարդկության ապագան:

ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի նախկին բարձրաստիճան ծառայող դոկտ. Ֆիլիպ Ֆաուլեյը ներկայացրեց ամերիկյան կառավարության քաղաքականությունը զինաթափման հարցում: Նա հայտարարեց, որ ամերիկյան կառավարությունը կողմ է լրիվ և ընդհանուր զինաթափման, սակայն տեխնիկական գիտությունների արագ զարգացումը դժվարացնում, գրեթե անհնարին է դարձնում վերահսկողությունը միջուկային զենքի նոր տեսակների արտադրության վրա՝ խանգարելով զինաթափման սովետա-ամերիկյան բանակցությունների հաջողությանը:

Հնդկաստանի պետական խորհրդական դոկտ. Կ. Տ. Չանդին զինաթափման հարցին անդրադարձավ տնտեսական տեսանկյունից և հետաքրքրական հաշվումներով ցույց տվեց, որ ներկայումս տարբեր պետությունների կողմից սպառազինման համար ծախսվող միջոցները եթե օգտագործվեն խաղաղասիրական նպատակներով, կարող են վերջ դնել Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ժողովուրդների հետամնացությանը՝ հսկայական մղում տալով նրանց սոցիալական ու տնտեսական զարգացմանը:

Մտքերի աշխույժ փոխանակությունից հետո ընդունվեց ԱՄՆ-ի կառավարությանն ուղղված մի դիմում՝ զինաթափման հարցի վերաբերյալ, և հատուկ պատգամավորության միջոցով հանձնվեց Կոնգրեսի նախագահությանը:

Աշխատանքային կոմիտեի ապրիլի 6-ի երեկոյան նիստում ընդհանուր քարտուղար դոկտ. Կարոլի Տոթը, նստաշրջանի նախագահության անունից, ներկաներին ծանոթացրեց տարբեր եկեղեցիների պետերից ստացված ուղերձներն ու նամակները զինաթափման հարցի վերաբերյալ: Անդրադառնալով Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի ուղերձին, նա դրվատեց հայ եկեղեցու խաղաղասիրական ավանդույթները և նշեց, որ նրա Պետը բարոյապես միշտ զորավիգ է հանդիսացել և հանդիսանում Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսին:

Հայոց Հայրապետի ուղերձը ողջունվեց ծափերով և ընդունվեց շնորհակալության բանաձև:

Ստորև ներկայացնում ենք Վեհափառ Հայրապետի ուղերձը.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ

(Նյու-Վինդսոր, Մերիլենդ-ԱՄՆ, 5—8 ապրիլի 1976)

Սիրեցյալ եղբայրներ Մեր ի Քրիստոս,

Խորին գոհունակությամբ ողջունում ենք գումարումը Խաղաղության քրիստոնեական համախմբումի կոմիտեի, որի այս նստաշրջանը առաջադրել է քննարկելու՝ «Քրիստոնյաների բարոյական պարտավորությունները զինաթափման հարցում» նյութը:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին, որի զավակները անցյալ դարերի ընթացքում ողբերգական ծանր դժբախտություններ են կրել պատերազմների ընթացքում, միշտ աղոթել է և իր ձայնը բարձրացրել ի պաշտպանություն խաղաղության սրբազան դատի և համբարձնում բարի կամեցողության, աշխարհի ժողովուրդների միջև:

Ազգությունների միջև խաղաղության

պաշտպանության և ամրապնդման ճանապարհի վրա, զինաթափությունը անշուշտ որ կհանդիսանա մեր ժամանակների ամենաառաջնահերթ հարցը, որը անհրաժեշտ է լուծել շուտափույթ կերպով: Աշխարհի բոլոր ժողովուրդները կենսականորեն շահագրգռված են այդ հարցի դրական լուծումով, որովհետև միջուկային մի պատերազմ համայն մարդկության համար կլիներ ամենամեծ սպանդը:

Ահա թե ինչու զինաթափման հարցը, շատ բարդությունների հետ կապված, կարող է ամբողջական լուծում գտնել միմիայն խաղաղատենչ բոլոր պետությունների, բոլոր եկեղեցիների, բարի կամեցողության տեր բոլոր մարդկանց հավաքական ճիգերով, սիրով և ազնիվ հույսերով միավորված: Նպաստել զինաթափման գործին՝ նշանակում է պատվար բարձրացնել հնարավոր ամեն պատերազմի ճանապարհի վրա: Մարդկության երջանկությունը կարելի է իրականացնել միայն մի աշխարհում, որտեղ բացառվում են պատերազմները և որտեղ միջուկային ուժը և պատերազմական զենքերի ծախսերը օգտագործվելու են մեր նմանների առառապանքների վերացման համար:

Հարյուր միլիոնավոր մարդիկ, ցածր զարգացման մակարդակի վրա գտնվող երկրներում, Աֆրիկայում, Ասիայում և Լատինական Ամերիկայում, մեր օրերին որոնում են ամենաազդու մեթոդները գտնելու համար իրենց հառաջադիմության և բարեկեցության ճանապարհը:

Մենք երջանիկ ենք հաստատելու, թե արդի միջազգային իրադրությունը, որը բնորոշվում է խաղաղ գոյակցության սկզբունքներով, նոր և մեծ նպաստ կարող է հանդիսանալ զինաթափման: Իրականություն է այսօր, թե սովետ-ամերիկյան բարեկամության արդի հարաբերությանց մեջ, զինաթափման սահմանափակման հարցերը գրավում են կարևորագույն տեղ:

Մեզ համար մեծագույն մխիթարություն է հաստատել, թե ժողովուրդների ուշադրությունը այս օրերին կենտրոնացած է ՄԱԿ-ի զինաթափման համաշխարհային համագումարի աշխատանքների վրա:

Հանուն մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսի Ավետարանի, մենք քրիստոնյաներս, հաստատակամորեն ակնկալում ենք իրականացումը ընդհանուր և ամբողջական զինաթափման և պատերազմական ծախսերի օգտագործումը խաղաղ նպատակների համար:

Սիրելի եղբայրներ, Մենք վերստին ջերմորեն ողջունում ենք ձեզ և աղոթում, որ սուրբ Հոգին լինի ձեզ օգնական, որպեսզի նաև ձեր աղոթքներով և անդուլ ճիգերով, արմատախիլ լինի պատերազմը մարդկային ընկերության կյանքի անդաստանից:

Թող Աստված օրհնի ձեր աշխատանքները և ձեր սուրբ առաքելությունը: